Funded by the European Union

PGG III. Արդարադատության հասանելիությունը կանանց համար. Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության չափանիշների իրականացում

Իրականացման ժամանակահատված: 01.03.2023 - 28.02.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 800 000

Ընդհանուր բյուջե: € 1 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of Europe

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/partnershipgovernance/, https://twitter.com/CoE_EU_PGG

Նախագծի կայքէջ: partnership-governance-eu.coe.int/

Նախագծի նկարագրություն:

Տարածաշրջանային ծրագիրը նպաստելու է արդարադատության համակարգից օգտվելիս կանանց առջև առաջացող համակարգային խոչընդոտների դեմ պայքարին և դրանց հաղթահարմանը՝ և՛ իրավական և ինստիտուցիոնալ մարտահրավերների, և՛ սոցիալ-մշակութային խոչընդոտների, որոնք դրսևորվում են Արևելյան գործընկերության երկրների արդարադատության համակարգերում որպես գենդերային կողմնակալություն: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի երրորդ փուլի շրջանակներում: Այն հիմնված է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի նախորդ փուլերի արդյունքների վրա՝ կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում (Փուլ I 2015-2018թթ. և Փուլ II 2019-2023թթ.):

Ակնկալվող արդյունքներ:

Ակնկալվող արդյունքներ.
1. Արևելյան գործընկերության երկրների իրավաբան մասնագետները կբարելավեն կանանց արդարադատության հասանելիության խոչընդոտների վերացման վերաբերյալ գիտելիքները՝ ապահովելով գենդերային բաղադրիչի ներառումը արդարադատության շղթայի մեջ:
2. Միջոցներ կիրականացվեն իրավաբանական ուսումնական հաստատությունների հետ՝ ապահովել գենդերային բաղադրիչի ներառումը արդարադատության շղթայի մեջ՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ:
3. Կստեղծվի դատաիրավական ուսումնական հաստատությունների տարածաշրջանային ցանց՝ արդարադատության հավասար հասանելիության ինստիտուցիոնալ խոչընդոտները վերացնելու համար:
4. Կիրականացվեն բազմակողմ երկխոսություն և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ տեղեկացնելու և առաջարկելու ցուցանիշներ, որոնք պետք է կիրառվեն գնահատելու բոլորի համար արդարադատության մատչելիության աստիճանը: